ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/05

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2018թ. թիվ 03/26-3/303-18 գրությամբ «Սիտի սայնս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի 08.01.2018թ. և 11.01.2018թ. (այսուհետ՝ Պատվիրատու) գրությունների հիման վրա, 12.01.2018թ. թիվ 03/26-3/303-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Սիտի սայնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 17.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/571-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը Խորհրդին դիրքորոշում չի ներկայացրել:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 12:15-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ընթացակարգին հայտ ներկայացնելուց առաջ Ընկերությունը չի կարողացել տեղեկանալ իր հարկային պարտավորությունների մասին, որից հետո հայտը ներկայացնելուց հետո պարզվել է, որ Ընկերությունը ունի 656 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ, որը Ընկերության կողմից 29.12.2017 թվականի դրությամբ մարվել է:

3. Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ն 08.01.2018թ. և 11.01.2018թ. գրություններով հայտնել է, որ armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվել է «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Սահմանված կարգով հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որտեղից ստացվել է եզրակացություն համաձայն որի «Սիտի սայնս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 12:15-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՍՑ-ԱՄ-2018/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «Սիտի սայնս» ՍՊԸ-ն 22.12.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Սիտի սայնս» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Սիտի սայնս» ՍՊԸ-ն բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 25.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

4. ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 28.12.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սիտի սայնս» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 654 871 000 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 29.12.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով մերժել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ի հայտը և սամանված կարգով վերջինիս տվյալները ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2018թ. թիվ 03/26-3/303-18 գրությունը, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի 08.01.2018թ. և 11.01.2018թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ << գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար

սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Գնումների մասին << օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ << ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ եթե Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կամ Կոմիտեի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազոր մարմին:

Ընդ որում այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն ***Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորությունների առկայությունը, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:***

Այսպիսով, Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Սիտի սայնս» ՍՊԸ-ն 22.12.2017թ. հայտ է ներկայացրել:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Սիտի սայնս» ՍՊԸ-ն բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 25.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, որին ի պաստասխան՝ ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 28.12.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սիփի սայնս» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 654 871 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 29.12.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով մերժել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ի հայտը և սամանված կարգով վերջինիս տվյալները ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** *պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ* ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»

պարբերության վերաբերյալ, Խորհուրդը գտնում է, որ «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը գերազանցում է ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2018թ. թիվ 03/26-3/303-18 գրությամբ «Սիտի սայնս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02585942) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Սիտի սայնս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ